ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№

«31» հուլիսի 2024թ

«ՎԵԲ ՍԼՈՒՇՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ԹԱՄԱԶՅԱՆԻՆ
(հասցե՝ Ավշար,Ն.Նշանյանի փ. 32/1 15
Էլ. փոստ sasuntamazyan11@gmail.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և **«Վեբ Սլուշն» ՍՊԸ-Ի** (այսուհետ՝ Ընկերություն) միջև 01.07.2024 թվականին կնքված **«ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-24/61-1»** ծածկագրով էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը» պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով ժամկետներում Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ծառայությունը և վճարել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով 24. 07. 2024թ. Մ/29447-2024 Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած պարտավորություններից հրաժարվելու գրությունը, ինչպես նաև ՀՀ

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծում է:

Ընկերության հետ կնքված «**ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-24/61»** ծածկագրով էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների մատուցման կնքված պայմանագիրը համարվում է լուծված 1,999,998 ՀՀ դրամ գումարի չափով: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից պայմանագրի ապահովման՝ 200, 000 ՀՀ դրամը և որակավորման ապահովման՝ 300,000 ՀՀ դրամը (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 գանձապետական հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին:

Հարգանքով՝

Recoverable Signature

Նասիբյան
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ
1205870326

X

Signed by: NASIBYAN HAYKAZ 1205870326

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կատարող՝
Գնումների համակարգման բաժնի պետ, Աննա Ղարիբջանյան
011597194